Ընտանեկան

Ուղեցույց

Ընտանեկան

Ո ւ ղ ե ց ո ւ յ ց

Հրատարակվել է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

© 1992, 1999, 2001, 2006 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են:
Printed in the United States of America

Անգլերենի հաստատումը՝ 2/06:
Թարգմանության հաստատումը՝ 2/06:
Family Guidebook -ի թարգմանությունը:
Armenian

Բովանդակությունը

«Ընտանիք. Հայտարարություն Աշխարհին» iv

Ընտանիքի կազմակերպումը և նպատակը 1

Ավետարանի ուսուցանումը տանը 4

Ընտանեկան պարտականությունների կատարում 12

Ղեկավարության ուսուցանում 15

Տանը երկրպագության ծառայություններ անցկացնելը
(մեկուսացած տարածքներում ապրող ընտանիքների համար) 16

Քահանայության արարողություններ և օրհնություններ 18

Եկեղեցու նյութեր ձեռք բերելը և Ընտանիքի Պատմության
մեջ տեղեկություններ տեղադրելը 26

«Ընտանիք՝ Հայտարարություն Աշխարհին»

1995թ. Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը հրապարակեցին «Ընտանիք՝ Հայտարարություն Աշխարհին» ուղերձը: Այս կոչը մի հայտարարագիր է, որը վերահաստատում է վարդապետություններն ու գործունեությունը, ինչը Եկեղեցու ողջ պատմության ընթացքում մարգարեները շարունակաբար հաստատել են: Այն ընդգրկում է սկզբունքներ, որոնք կենսականորեն անհրաժեշտ են ամեն մի ընտանիքի երջանկության և բարեկեցության համար: Ընտանիքի անդամները պետք է ուսումնասիրեն այս կոչը և ապրեն ըստ այդ պատվիրանների:

«Մենք՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Խորհուրդը, պաշտոնապես հայտարարում ենք, որ տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից և, որ ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում՝ Իր զավակների հավերժական ճակատագրի համար:

Մարդկային էակները՝ տղամարդիկ և կանայք, բոլորն արարվել են Աստծո պատկերով: Յուրաքանչյուրը երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և, որպես այդպիսին, յուրաքանչյուր ոք ունի աստվածային բնույթ և ճակատագիր: Սեռն անհատի հիմնական բնութագիրն է նախաերկրային, երկրային և հավերժական կյանքի և նպատակի:

Նախաերկրային աշխարհում հոգևոր որդիներն ու դուստրերը ճանաչում և երկրպագում էին Աստծուն, որպես իրենց Հավերժական Հորը և ընդունում էին Նրա ծրագիրը, ըստ որի պետք է ֆիզիկական մարմիններ ձեռք բերեին և աշխարհիկ փորձ կուտակեին դեպի կատարելություն ընթանալու և իրենց աստվածային ճակատագիրը որպես հավերժական կյանքի ժառանգներ բացառիկ կերպով գիտակցելու համար: Երջանկության աստվածային ծրագիրը հնարավորություն է տալիս, որ ընտանեկան կապերը շարունակվեն մահից հետո: Սուրբ տաճարներում կատարվող սուրբ արարողություններն ու ուխտերը հնարավոր են դարձնում անհատների համար՝ վերադարձը դեպի Աստծո ներկայությունը, իսկ ընտանիքների համար՝ հավերժական միասնությունը:

Ադամին և Եվային Աստծո կողմից տրված առաջին պատվիրանը վերաբերվում էր որպես ամուսին և կին նրանց ծնող դառնալու հնարավորությանը: Մենք հայտարարում ենք, որ դեռևս ուժի մեջ է Իր զավակներին տված շատանալու և երկիրը լցնելու վերաբերյալ Աստծո պատվիրանը: Մենք հայտարարում ենք նաև Աստծո այն պատվիրանը, որ ծնունդ տալու սուրբ զորությունը պետք է օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին:

Մենք հայտարարում ենք, որ երկրի վրա կյանքի ստեղծման ուղիները ղեկավարվում են Աստծո կողմից: Մենք հաստատում ենք կյանքի սուրբ լինելը և նրա կարևորությունն Աստծո հավերժական ծրագրում:

Ամուսինը և կինը սուրբ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց և երեխաների համար: «Որդիքը Տիրոջ ժառանգությունն են» (Սաղ. ՃԻԷ.3):

Ծնողների սուրբ պարտականությունն է՝ դաստիարակել երեխաներին սիրո և առաքինության մթնոլորտում, ապահովել նրանց նյութական և հոգևոր կարիքները, ուսուցանել նրանց սիրել և ծառայել մեկը մյուսին, պահել Աստծո պատվիրանները և օրինապաշտ քաղաքացիներ լինել, որտեղ էլ, որ ապրեն: Ամուսիններն ու կանայք՝ մայրերն ու հայրերը հաշվետու կլինեն Աստծո առջև այս պարտականությունների իրականացման համար:

Ընտանիքը հաստատված է Աստծո կողմից: Տղամարդու և կնոջ ամուսնությունը հիմնական մասն է Նրա հավիտենական ծրագրի: Երեխաները պետք է ծնվեն ամուսնացած ծնողներից և դաստիարակվեն մոր և հոր կողմից, ովքեր ընդունում են ամուսնության խոստումը և հնազանդվում դրան ողջ հավատարմությամբ: Ընտանեկան կյանքում երջանկության հասնելու ամենամեծ հավանականությունն այն դեպքում է, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա: Հաջողակ ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում և պահպանվում են հավատի, աղոթքի, ապաշխարության, ներողամտության, հարգանքի, սիրո, կարեկցանքի, աշխատանքի և առողջ ու ստեղծարար միջոցառումների սկզբունքներով: Ըստ աստվածային ծրագրի՝ հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքները սիրով ու առաքինությամբ, և պատասխանատու լինեն ապահովելու ընտանիքի կենսական կարիքներն ու պաշտպանությունը: Մայրերը, հատկապես, պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակման համար: Այս սուրբ պարտականություններն իրականացնելիս, հայրերն ու մայրերը պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար գործընկերներ: Անաշխատունակությունը, մահը կամ այլ իրավիճակները կարող են անհրաժեշտություն առաջացնել, որպեսզի փոփոխվեն ընտանիքի համար հոգ տանողների դերերը: Անհրաժեշտության դեպքում ընտանիքները կարող են ապավինել նաև մերձավորների օգնությանը:

Մենք զգուշացնում ենք, որ այն անհատները, ովքեր խախտում են ողջախոհության ուխտերը, բռնություն են գործադրում իրենց կանանց, ամուսինների կամ երեխաների հանդեպ, կամ թերանում են ընտանեկան պարտականությունները կատարելիս, մի օր հաշվետու կլինեն Աստծո առջև: Դեռ ավելին, մենք զգուշացնում ենք, որ ընտանիքի քայքայումը անհատներին, համայնքներին և ազգերին կպատճառի այն դժբախտությունները, որոնց մասին կանխագուշակել էին հին ու նոր մարգարեները:

Մենք դիմում ենք պատասխանատու քաղաքացիներին և կառավարության պաշտոնյաներին ամենուր, որպեսզի պայմաններ ստեղծեն և միջոցառումներ անցկացնեն ուղղված ընտանիքների, որպես հասարակության հիմնական միավորների, պահպանմանն ու ամրապնդմանը» (*Ensign*, Nov. 1995, 102):

Ընտանիքի կազմակերպումը և նպատակը

Կազմակերպումը

Ընտանիքը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեղու սրբազան օղակն է՝ ամենակարևոր հասարակական միավորը ժամանակի և հավերժության մեջ: Աստված հիմնել է ընտանիքները՝ երջանկացնելու համար Իր զավակներին, հնարավորություն տալու նրանց սովորել ճիշտ սկզբունքները սիրո

մթնոլորտում և պատրաստվել հավերժական կյանքին:

Տունը ավետարանի սկզբունքները ուսուցանելու, սովորելու և կիրառելու ամենալավ վայրն է: Դա այն տեղն է, որտեղ անհատները սովորում են հայթայթել սնունդ, հագուստ, գտնել ապաստան և անհրաժեշտ այլ պարագաներ: Հայրը և մայրը, որպես հավասար զուգընկերներ, պետք է օգնեն ընտանիքի յուրաքանչյուր անդամին՝

- Փնտրել ճշմարտությունը և զարգացնել հավատ Աստծո հանդեպ:
- Ապաշխարել մեղքերից, մկրտվել մեղքերի թողության համար, դառնալ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ և ստանալ Սուրբ Հոգին:
- Հնազանդվել Աստծո պատվիրաններին, ջանասիրաբար ուսումնասիրել սուրբ

գրությունները, ասել անհատական ամենօրյա աղոթքները և ծառայել մերձավորին:

- Ուրիշների հետ կիսվել ավետարանով:
- Լինել օժտված և ամուսնանալ տաճարում հավերժության համար արժանի կողակցի հետ, ստեղծել երջանիկ տուն ընտանիքի համար և սիրով ու զոհողությամբ ապահովել ընտանիքը:

- Մահացած նախնիների մասին տեղեկություններ փնտրել և նրանց համար տաճարային արարողություններ կատարել:

- Հոգ տանել ընտանիքի համար՝ հոգևոր, սոցիալական, ֆիզիկական և զգացմունքային առումներով:

Հայրը ղեկավարում է ընտանիքը և պատասխանատու է ուսուցանելու, երեխաների և ընտանիքի համար անհրաժեշտ կարիքները հոգալու համար: Արժանի և ծառայելու կանչվելու իրավունք ունեցող հայրը Եկեղեցում քահանայություն կրելու հնարավորություն ունի, որը Աստծո անունով գործելու զորություն և իշխանություն է: Այդ զորությամբ ու իշխանությամբ, հայրը դառնում է իր ընտանիքի քահանայության ղեկավարը: Նա ղեկավարում է իր ընտանիքն այնպես, որ անդամները պատրաստ լինեն մեր Երկնային Հոր ներկայություն վերադառնալուն: Նրա կինը իր ամենակարևոր զուգընկերն է, գործընկերը և խորհրդատուն: Ամուսինը և կինը պետք է միասին խորհրդակցեն բոլոր հարցերում, որոնք առնչվում են ընտանիքին և տանը:

Հայրը պետք է հոգա ընտանիքի հոգևոր կարիքները: Նա պետք է հետևի, որ նրանց ուսուցանվի Հիսուս Քրիստոսի ավետարանը, պետք է անի հնարավոր ամեն ինչ՝ խրախուսելու և օգնելու նրանց հնազանդվել Տիրոջ պատվիրաններին:

Քահանայություն կրող հայրը կարող է օրհնել իր ընտանիքի անդամներին և հոգալ նրանց հոգևոր կարիքները: Իր քահանայության իշխանությամբ և *իր քահանայության ղեկավարի լիազորությամբ* հայրը կարող է.

1. Անվանակոչել և օրհնել երեխաներին:
2. Մկրտել երեխաներին (և ուրիշներին):
3. Ձեռնադրել երեխաներին (և ուրիշներին) որպես Եկեղեցու անդամներ և Սուրբ Հոգի շնորհել նրանց:
4. Շնորհել քահանայություն իր որդիներին (և ուրիշներին) և կարգել նրանց քահանայության պաշտոնների:
5. Օրհնել և բաժանել հաղորդությունը:
6. Օծել գերեզմաններ:

Առանց իր քահանայության ղեկավարի լիազորության, հայրը, որը կրում է Մելքիսեդեկյան

Քահանայություն, կարող է սրբագործել յուղը և օրհնել իր ընտանիքի անդամներին և ուրիշներին, երբ նրանք հիվանդ են, և տալ նրանց հատուկ օրհնություններ ցանկացած ժամանակ, երբ դրա կարիքն առաջանա: (Տե՛ս էջ 18–25 այս ուղեցույցում՝ հրահանգներ քահանայության արարողությունների և օրհնությունների կատարման համար):

Հայրը պետք է հետևի, որ ընտանիքն ակտիվորեն ընդգրկվի երեք հիմնական պարտականությունների մեջ.

1. Անհատական և ընտանեկան հոգևոր և աշխարհիկ պատրաստվածություն:
2. Կիսվել ավետարանով:
3. Ընտանիքի պատմություն և տաճարային արարողություններ ապրողների և մահացածների համար:

Մայրը իր ամուսնու հավասար կողակիցն ու խորհրդատուն է: Նա է օգնում ամուսնուն Աստծո օրենքները երեխաներին ուսուցանելու գործում: Իսկ, եթե ընտանիքում հայր չկա, ապա մայրն է ղեկավարում ընտանիքը:

Հոր ու մոր նպատակը նույնը պիտի լինի: Նրանց նպատակը պետք է լինի՝ նախապատրաստել ընտանիքի բոլոր անդամներին մեր Երկնային Հոր մոտ վերադառնալուն: Նրանք պետք է միասնական լինեն այս նպատակի ուղղությամբ աշխատելիս: Տերը հիմնել է Եկեղեցին, որպեսզի օգնի հայրերին ու մայրերին ուսուցանել ու հոգալ իրենց ընտանիքի համար:

Երբ երեխաները աշխարհ են գալիս, ծնողները պետք է սիրեն նրանց, ուսուցանեն նրանց ավետարանի ճշմարտության մասին և լինեն արդար ապրելակերպի օրինակ: Երեխաները պետք է սովորեն ու պահեն Աստծո պատվիրանները: Նրանք պետք է հարգեն և հնազանդվեն իրենց ծնողներին:

Եկեղեցու ամրությունը կախված է այնպիսի ընտանիքներից և անհատներից, որոնք ապրում են Հիսուս Քրիստոսի ավետարանով: Այն, թե որքանով է ընտանիքը վայելում ավետարանն ու օրհնությունները, հիմնականում կախված է նրանից, թե որքանով են հայրը և մայրը հասկանում և կատարում իրենց հիմնական ծնողական պարտականությունները: Եկեղեցին երբեք նպատակ չի հետապնդում այնպիսի ծրագրեր կամ պարտականություններ տալ հայրերին և մայրերին, որոնք կծանրաբեռնեն նրանց կամ կստիպեն նրանց անտեսել իրենց ամենահիմնական պարտականությունները:

Նպատակը

Քանի որ մեր Երկնային Հայրը սիրում է մեզ, Նա ցանկանում է, որ մենք նույնպես վեհացում ստանանք, ինչպես Ինքը: Մեզ օգնելու համար, Նա տվել է հետևելու ծրագիր, որը հիմնված է աստվածային օրենքի ճշմարտության վրա: Նրանք, ովքեր ուսումնասիրել են ծրագիրը և հավատով հետևում են դրան, մի օր ի վիճակի կլինեն դառնալ մեր Երկնային Հոր նման և վայելել այն կյանքը, որով Նա է ապրում:

Մեզ համար պատրաստված ծրագրի մի մասն էր երկինքը թողնելը և երկիր գալը: Այստեղ մենք ստանում ենք ֆիզիկական մարմին, ուսուցանվում ենք փորձառությունների միջոցով, և մեզ արժանի ենք դարձնում կրկին ապրելու Աստծո ներկայությամբ: Մենք մեզ արժանի ենք դարձնում, երբ ինքնակամ ընտրում ենք Նրա օրենքները պահելը: (Տե՛ս Աբրահամ 3.23–25; 2 Նեփի 2.27:)

Օգնելու համար մեզ, որ պատրաստ լինենք Նրա հետ ապրելուն, մեր Երկնային Հայրը մեզ համար կազմակերպել է ընտանիքներ: Սրբազան արարողությունների և ուխտերի միջոցով մեր ընտանիքները կարող են հավերժ միավորվել:

Ավետարանի ուսուցանումը տանը

Երեխաներին բարությամբ ու սիրով ուսուցանել

Տերը պատվիրել է ծնողներին ուսուցանել ավետարանը իրենց երեխաներին: Նա ասել է.

«Եվ բացի այդ, որքան որ ծնողները երեխաներ ունեն Սիոնում կամ նրա կազմակերպված ցցերում, որոնց չեն ուսուցանում, որպեսզի մինչև ութ տարեկանը նրանք հասկանան վարդապետությունն ապաշխարության, հավատքի՝ առ Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, և մկրտության ու ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևի, մեղքը լինի ծնողների գլխին:

Քանզի դա օրենք պիտի լինի Սիոնի բնակիչների և նրա կազմակերպված ցցերի համար:

Եվ նրանց երեխաները պիտի մկրտվեն իրենց մեղքերի թողության համար, երբ ութ տարեկան են, և ձեռնադրվեն:

Եվ նրանք նաև պետք է իրենց երեխաներին ուսուցանեն աղոթել և ուղիղ քայլել Տիրոջ առաջ» (տես ՎԿՈ 68.25–28):

Ծնողները պետք է ուսուցանեն բարությամբ ու սիրով, հիշելով Պողոս Առաքյալի խորհուրդը՝ «մեծացրեք [ձեր երեխաներին] խրատով և Տիրոջ ուսմունքնով» (Եփեսացիս Զ.4):

Սուրբ գրությունների ընտանեկան ուսումնասիրություն

Մենք կարող ենք լինել ինչպես մեր Երկնային Հայրը և վայելել կյանք, որ Նա է ապրում, միայն պահպանելով օրենքները, որի վրա հիմնված են այդ օրհնությունները (տե՛ս ՎԿՈ 130.20–21): Նախքան մենք պատրաստակամ կլինենք՝ ապրել այդ օրենքներով, մենք պարտավոր ենք իմանալ, թե ինչպիսի օրենքներ են դրանք: «Անհնար է մարդու համար տգիտության մեջ փրկվել» (տես ՎԿՈ 131.6):

Հիսուս Քրիստոսը մեր ղեկավարն ու օրենսդիրն է: Նա գիտի այն ուղիներն ու օրենքները, որոնք մենք պարտավոր ենք պահել, և նա մեկ առ մեկ հրավիրում է մեզ հետևել իրեն: Նա ասել է. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը, ոչ ոք չի գալիս Հոր մոտ եթե ոչ ինձանով» (Հովհաննես ԺԴ.6): Մեր Երկնային Հորը նմանվելու և Իր մոտ վերադառնալու համար մենք պարտավոր ենք սովորել Հիսուսի ուսմունքները և հետևել դրանց: Մենք ունենք Սուրբ գրություններ, որոնք օգնում են մեզ սովորել Հիսուս Քրիստոսի կյանքի, ուսմունքների և պատվիրանների մասին:

Չորս գրքերը, որոնք Եկեղեցին ընդունում է որպես սուրբ գրություններ, հետևյալներն են՝ Աստվածաշունչը, Մորմոնի Գիրքը, Վարդապետություններ և Ուխտերը, Մեծագին Մարգարիտը: Նրանք բացատրում են Սուրբ գրքերի օրենքները և չափանիշները, ըստ որոնց մենք կարող ենք չափել մեր բոլոր մտքերը, արարքները և քարոզները: Նրանք օգնում են մեզ սովորել կյանքը և Հիսուս Քրիստոսի ուսմունքները և բերում են օրինակներ մարդկանց կյանքից, որոնք միշտ ունեցել են հավատ Աստծո հանդեպ և պահել են Նրա պատվիրանները:

Հիսուսը սովորեցրել է մեզ քննել և ուսումնասիրել սուրբ գրությունները (տե՛ս Հովհաննես Ե.39; 3 Նեփի 23.1; ՎԱՌ 88.118):

Ընտանիքները պետք է կանոնավոր ձևով ուսումնասիրեն սուրբ գրությունները և սովորեն Տիրոջ ուսմունքներն ու հետևեն դրանց: Ծնողները պետք է հավաքեն իրենց ընտանիքները միասին ամեն օր՝ օրվա որոշակի ժամի, միասին կարդան և ուսումնասիրեն սուրբ գրությունները: Ընտանիքի ամեն մի անդամ, ով կարողանում է կարդալ, պետք է հնարավորություն ունենա կարդալու սուրբ գրությունները:

Ընտանիքի անդամը, որը մինչև սուրբ գրությունների ուսումնասիրությունը ասում է բացող աղոթքը, խնդրում է Երկնային Հորը օրհնել յուրաքանչյուրին՝ հասկանալու, թե ինչ է ընթերցվում, նաև՝ վկայություն ստանալու այդ ընթերցումից: Ընտանիքը կարող է ցանկություն ունենալ ասելու ընտանեկան աղոթքը նաև սուրբ գրության ընթերցումից հետո:

Երբ ընտանիքի անդամները միասին կարդան ու քննարկեն սուրբ գրությունները, նրանք կկամենան ավելի նմանվել Փրկչին և կգտնեն ավելի մեծ երջանկություն և խաղաղություն իրենց կյանքում:

Անհատական և ընտանեկան աղոթքներ

Մեզանից յուրաքանչյուրը պետք է սովորի խոսել մեր Երկնային Հոր հետ աղոթքի միջոցով: Նա սիրում է մեզ ու ցանկանում է, որ մենք խոսենք Իր հետ: Նա կցանկանար, որ մենք շնորհակալ լինեինք Իրենից մեզ տրված օրհնությունների համար և խնդրեինք Իրենից օգնություն ու առաջնորդություն ապագայում: Նա օգնում է մեզ, երբ մենք դիմում ենք Իրեն: Հիմնականում աղոթքներն ասվում են գլուխները խոնարհած և փակած աչքերով, անկախ նրանից՝ ասվում է այն ծնկաչոք, նստած, թե՝ կանգնած:

Աղոթելիս մենք պարտավոր ենք պահպանել չորս կարևոր սկզբունքներ՝

1. Խոսելով մեր Երկնային Հոր հետ մենք սկսում ենք մեր աղոթքներն ասելով. «Մեր Երկնային Հայր . . .»:
2. Մենք շնորհակալություն ենք հայտնում մեր Երկնային Հորն այն ամենի համար, որ Նա տվել ու տալիս է մեզ. . . «Մենք շնորհակալ ենք Քեզանից. . . »:
3. Մենք խնդրում ենք մեր կարիքների համար օգնություն: «Մենք խնդրում ենք Քեզ . . .»:
4. Մենք փակում ենք աղոթքը Փրկչի անունով. «Հիսուս Քրիստոսի անունով, ամեն»:

Մեր աղոթքներում չպետք է միշտ հետևենք այս բոլոր չորս քայլերին, սակայն մտապահելով դրանք մենք աղոթել կսովորենք: Մեր աղոթքները պետք է միշտ սկսել և փակել առաջին և վերջին քայլերով, սակայն, ինչ վերաբերում է աղոթքի միջնամասին, ապա պետք է ուշադրություն դարձնենք, թե ինչն է տվյալ պահին կարևոր: Երբեմն մենք կցանկանանք աղոթքի մեջ հիմնականում մեր երախտագիտությունը հայտնել Երկնային Հորը այն ամենի համար, ինչով Նա մեզ օրհնել է: Մեկ այլ ժամանակ կարող է ցանկություն առաջանալ ավելի շատ խնդրանքներով լի աղոթքով դիմել Երկնային Հորը:

Անհատական աղոթքներ

Ամեն ոք պետք է անհատապես աղոթի՝ առնվազն մեկ անգամ ամեն առավոտ և երեկո: Ծնողները պետք է ուսուցանեն երեխաներին անհատապես աղոթել՝ սկսած այն պահից, երբ նրանք սկսում են խոսել: Ծնողները պետք է սովորեցնեն երեխաներին, թե ինչպես պետք է աղոթել միասին ծնկաչոք և ինչպես ասել աղոթք՝ խնդրելով նրանց իրենց հետևից կրկնել աղոթքի յուրաքանչյուր հատվածն առանձին: Շատ շուտով երեխաները արդեն ի վիճակի կլինեն ասել իրենց անհատական աղոթքները:

Ընտանեկան աղոթքներ

Յուրաքանչյուր ընտանիք պետք է ունենա ընտանեկան ամենօրյա աղոթք: Ամբողջ ընտանիքը ծնկի է գալիս և ընտանիքի ղեկավարը ասում է աղոթքը կամ խնդրում է ընտանիքի անդամներից որևէ մեկին այն ասել: Ամեն մեկը պետք է ունենա աղոթք ասելու հերթական հնարավորություն: Ծնողները

կարող են օգնել փոքր երեխաներին աղոթելիս: Ընտանեկան աղոթքի պահը երեխաներին աղոթքի էությունը հասկանալու հիանալի հնարավորություն է ընձեռում, ինչպես նաև՝ ըմբռնելու այնպիսի հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են՝ հավատը Աստծո հանդեպ, համեստությունն ու սերը:

Հատուկ աղոթքներ

Ծնողները պետք է սովորեցնեն երեխաներին, որ Աստված միշտ պատրաստ է լսել նրանց աղոթքները: Ի լրումն նրանց անհատական և ընտանեկան հերթական աղոթքների, նրանք կարող են աղոթել, ցանկացած պահի, երբ հատուկ օգնության կարիք ունեն կամ ցանկանում են հայտնել իրենց շնորհակալությունը:

Սննդի օրհնումը

Ծնողները պետք է հետևեն, որ ընտանիքի անդամները սովորեն շնորհակալություն հայտնել Աստծուն իրենց սննդի համար և խնդրեն Նրան օրհնել այն ուտելուց առաջ: Յուրաքանչյուր անձնավորությանը, ներառյալ՝ երիտասարդներին, պետք է հնարավորություն տրվի ասելու սննդի օրհնության աղոթք: Սնունդը օրհնելու համար ասվող աղոթքը օգնում է ծնողներին և երեխաներին մեկ անգամ ևս երախտապարտ լինել Երկնային Հորը:

Ընտանեկան երեկո

Ընտանեկան երեկոն բոլորի համար է, ներառյալ՝ նոր ամուսնացած զույգերի, երեխաներ ունեցող հայրերի և մայրերի, երեխաներ ունեցող միայնակ ծնողների, ծնողների, որոնք տանը երեխաներ չունեն, ընտանեկան երեկոյի խմբեր կազմող ամուրի չափահասների և նրանց համար, ովքեր միայնակ կամ համատեղ կենվորի հետ են ապրում: Անկախ իրենց հանգամանքներից, ամեն ոք կօրհնվի ընտանեկան երեկո անցկացնելու համար: Եկեղեցին ազատ է պահում երկուշաբթի երեկոները այլ միջոցառումներից, որպեսզի ընտանիքները կարողանան միասին լինել ընտանեկան երեկոների ժամանակ:

Առաջին Նախագահությունը հայտարարել է. «Մենք խոստանում ենք ձեզ շատ օրհնություններ, եթե դուք հետևեք Տիրոջ խորհրդին և կանոնավոր ընտանեկան երեկոները անցկացնեք: Մենք մշտապես աղոթում ենք, որ ծնողները Եկեղեցում ընդունեն ավետարանի սկզբունքները սովորեցնելու իրենց պատասխանատվությունները և օրինակ ծառայեն իրենց երեխաներին: Թող Աստված օրհնի ձեզ՝ լինելու ջանասեր այս ամենակարևոր պատասխանատվության մեջ» (“Message from the First Presidency,” *Family Home Evening Resource, Book* [1983], iv):

Որպես իր ընտանիքի հայրապետ, հայրն է նախագահում ընտանեկան երեկոյի ժամանակ: Հոր բացակայության ժամանակ, մայրն է նախագահում: Ծնողները ղեկավարում կամ հանձնարարում են ընտանիքի անդամներից որևէ մեկին վարել ընտանեկան երեկոն: Նրանք դաս են ուսուցանում կամ հանձնարարում են այն երեխաներին, ովքեր հասուն են այնքան, որ կարող են ուսուցանել: Յուրաքանչյուր երեխայի, ով արդեն հասուն է, պետք է տրվի այդ հնարավորությունը: Փոքր երեխաները կարող են ներգրավվել, օգնել, օրինակ՝ երաժշտությունն ընտրել և չափ տալ, հարցերին պատասխանել, սուրբ գրություններից հատվածներ փնտրել, պահել նկարներ, հյուրասիրությունը մատուցել և ասել աղոթքներ:

Ընտանեկան երեկոյի համար առաջադրվող կարգ.

- Բացող օրհներգ (ընտանիքով)
- Բացող աղոթք (ընտանիքի անդամ)
- Սուրբ գրության կամ հոգևոր այլ մտքի ընթերցում (ընտանիքի անդամ)
- Դաս (հայրը, մայրը կամ ավագ զավակները)
- Միջոցառում (ընտանիքի մեկ անդամի կողմից ղեկավարվող և ընտանիքի բոլոր անդամների մասնակցությամբ)
- Փակող օրհներգ (ընտանիքով)
- Փակող աղոթք (ընտանիքի անդամ)
- Հյուրասիրություն

Ընտանիքը կարող է կազմակերպել ընտանեկան երեկոները տարբեր եղանակներով: Ընտանեկան երեկոն հանդիսանում է այն միջոցառումը, որը հավաքում է ընտանիքը մեկտեղ, ամրացնում է սերը միմյանց հանդեպ, օգնում է նրանց ավելի մոտ լինել Երկնային Հորը և խրախուսում է ապրել արդար կյանքով: Նման միջոցառման օրինակներ կարող են լինել սուրբ գրությունների համատեղ ընթերցանությունները, ավետարանի քննարկումները, վկայություններով կիսվելը, ծառայելու ծրագրեր իրականացնելը, միասին երգելը, քաղաքից դուրս գնալը, ընտանեկան խաղերի կազմակերպումը և միասին զբոսանքները: Ընտանեկան բոլոր երեկոները պետք է ընդգրկեն աղոթքներ:

Ընտանեկան երեկոյի դասերը կարող են կառուցվել սուրբ գրությունների, վերջին օրերի մարգարեների մտքերի, համաժողովների ուղերձների, անձնական վկայությունների և կյանքի փորձառությունների հիման վրա: Որոշ դասերի նյութեր պիտի ընդգրկեն պատմություններ Փրկչի ծննդից, կյանքից, ուսմունքներից և քավությունից: *Ավետարանի Սկզբունքները*, *Ավետարանի Հիմունքները*, *Հավատքին Հավատարիմ*, *Երիտասարդներին զորացնելու համար* և եկեղեցու ամսագրերը պարունակում են հոդվածներ և այլ տեղեկություններ տարբեր թեմաների մասին, որոնք կարող են ընտանեկան երեկոյի դասերի համար նյութեր հանդիսանալ:

Ընտանեկան երեկոյի համար առաջարկվող թեմաներ՝

- Փրկության ծրագիրը
- Հիսուսի կյանքն ու ուսմունքները
- Ապաշխարություն
- Աղոթք
- Ծոմապահություն
- Իմաստության Խոսք
- Մաքրաբարոյության Տիրոջ չափանիշը
- Հաղորդության խորհուրդը
- Տասանորդ

- Երախտագիտություն
- Ազնվություն
- Պատկառանք Աստծո հանդեպ և հարգանք Նրա արարչագործության հանդեպ
- Պատրաստվել մկրտությանը, քահանայական արարողություններին կամ ամուսնությանը
- Պատրաստվել տաճար այցելելուն
- Սուրբ գրությունների ընթերցում
- Կիրակի օրը սուրբ պահել
- Ներել մերձավորներին
- Ստանալ վկայություն ու կիսվել դրանով
- Կիսվել ավետարանով մերձավորների հետ
- Հավաքել ընտանեկան պատմություն
- Հասկանալ և ընդունել մահվան իմաստը որպես այդպիսին
- Լուծել ընտանեկան խնդիրները
- Տնօրինել ընտանիքի ֆինանսները
- Ընտանեկան պարտականությունների բաշխում
- Գնահատել և բավականություն ստանալ երաժշտությունից

Սուրբ տոներ և հատուկ առիթներ

Տոներն ու հատուկ առիթները, ինչպիսիք են՝ Սուրբ Ծնունդը, Զատիկը, Քահանայության վերականգնման տարեդարձը, համաժողովները, ընտանիքի անդամի միսիայի մեկնելը, ծննդյան տարեդարձները, մկրտությունը կամ ընտանիքի անդամի կարգումը, կարող են հիանալի առիթ հանդիսանալ ավետարանի ճշմարտությունների մասին ուսուցանելու համար:

Տասանորդ և նվիրատվություններ

Տերը պատվիրել է Իր ժողովրդին ապրել տասանորդի օրենքով և լինել արժանի խոստացված օրհնություններին (տե՛ս Մաղաքիա Գ.8–11):

Ծնողների համար տասանորդի և նվիրատվությունների օրենքը սովորացնելու ամենահարմար առիթը այն ժամանակն է, երբ ծնողները իրենք են այն վճարում: Երեխաները շատ նրբազգաց են դառնում, երբ տեսնում են, թե ինչպես են ծնողները դա անում: Եթե երեխաները ստանում են պարբերաբար վճարվող որևէ գումար, պետք է դրանից տասանորդ վճարեն: Ամեն մի երեխա կարող է գումար հավաքելու երեք տարբեր գանձարկղներ ունենալ, մեկը՝ տասանորդի, մյուսը՝ միսիայի, իսկ երրորդը՝ անձնական ծախսերի համար: Երեխաներն ամեն անգամ գումար ստանալիս, պետք է սովորեն, առաջին հերթին, դրա 10 տոկոսը առանձնացնել տասանորդի գանձարկղում, մի որոշ մասն առանձնացնել միսիայի համար նախատեսված գանձարկղում, իսկ մնացած մասը՝ անձնական ծախսերի համար նախատեսվող գանձարկղում:

Երբ երեխաները վճարում են տասանորդի գումարը, ծնողները պետք է սովորեցնեն նրանց լրացնել տասանորդի թերթիկը՝ գումարի հետ այն դնելով ծրարի մեջ հանձնել

կամ փոխանցել ճյուղի նախագահին կամ եպիսկոպոսության անդամին: Այն ընտանիքները, որոնք մեկուսացած տարածքներում են ապրում, պետք է հանձնեն իրենց տասանորդը իրենց նշանակված քահանայության ղեկավարին:

Զրույցներ ճաշի ժամանակ

Ճաշի ժամանակը կարող է ավետարանի մասին խոսելու հարմար առիթ հանդիսանալ: Փոքր երեխաները սիրում են հարցնել ավետարանի մասին և պատասխանել հարցերին: Երբ նրանք չեն իմանում պատասխանները, հայրը կամ մայրը կարող են տալ համառոտ պատասխան՝ ուսուցանելով ավետարանը: Ընտանեկան ոչ բոլոր ճաշերի ժամանակ պետք է ավետարանի թեմայով զրույցներ ծավալվեն, սակայն նման քննարկումները շաբաթական երկու-երեք անգամ կարող են օգնել ընտանիքին ավետարանը սովորելու գործում:

Պատմություններ քնելուց առաջ

Շատ երեխաներ սիրում են լսել պատմություններ քնելուց առաջ, ուստի ավետարանը ուսուցանելու հրաշալի հնարավորություն է սուրբ գրություններից, եկեղեցու պարբերականներից, կամ կյանքի դրվագներից պատմելը կամ կարդալը: Ազնվության, բարության և մարդասիրության մասին պատմություններն ուսուցանում են ավետարանի սկզբունքները:

Միասին աշխատել

Ընտանիքում միասին կատարվող աշխատանքները ավետարանի ուսուցման հիանալի հնարավորություն կարող են ծառայել: Օրինակ, տունը մաքրելիս կամ այգում կամ պարտեզում աշխատանքներ կատարելիս, ծնողները կարող են այդ առիթը օգտագործել ավետարանի մասին խոսելու համար:

Երեխաները հաճախ են հարցեր տալիս և ծնողները պետք է փորձեն գտնել այդ հարցերի պարզ պատասխանները: Այնպիսի արտահայտությունները, ինչպիսիք են՝ «Դու հրաշալի աշխատող ես և համոզված եմ, որ Երկնային Հայրը հպարտ է քեզանով» կամ «Նայիր այն գեղեցիկ ամպերին, որ Երկնային Հայրն է արարել», կարող են երախտագիտության զգացում առաջացնել մեր Երկնային Հոր հանդեպ, ու նաև հավաստիացում, որ Նա իրական է:

Ընտանեկան խորհուրդներ

Ծնողները կարող են կազմակերպել ընտանեկան խորհուրդ՝ հրավիրելով ընտանիքի անդամներին: Նման խորհուրդը օգնում է ընտանիքներին քննարկել ընտանիքի նպատակները, լուծել ընտանեկան խնդիրները, քննարկել ֆինանսական հարցերը, մշակել ծրագրեր, աջակցել և խրախուսել միմյանց,

բերել վկայություն և աղոթել միմյանց համար: Խորհուրդը հրավիրվում է ամեն անգամ, երբ զգացվում է դրա անհրաժեշտությունը: Ծնողները կարող են հրավիրել ընտանեկան խորհուրդ կիրակի օրը, կամ համատեղել այն ընտանեկան երեկոյի հետ: Փոխադարձ հարգանքը մյուսների կարծիքների և մտքերի նկատմամբ շատ էական է ընտանեկան խորհրդի հաջող ելքի առումով:

Անհատական առանձնազրույցներ

Շատ ծնողներ գտնում են, որ հաճախակի առանձնազրույցները յուրաքանչյուր երեխայի հետ օգնում են ավելի մտերմանալ իրենց զավակների հետ, խրախուսել նրանց, սովորեցնել ավետարանը: Յուրաքանչյուր առանձնազրույց կարող է լինել և մտերմիկ, և պաշտոնական, և կարող է հաճախակի անցկացվել:

Ծնողը պետք է սեր և վստահություն ցուցաբերի երեխայի նկատմամբ, երեխան, իր հերթին, պետք է հնարավորություն ունենա արտահայտելու իր կարծիքը, մտքերը, զգացումները, քննարկվող հարցի, խնդրի կամ դեպքի շուրջ: Ծնողը պետք է լսի երեխային շատ ուշադիր և պետք է երեխային հուզող խնդիրներին ու գաղտնապահությանը վերաբերվի լրջորեն: Ծնողը և զավակը կարող են, ցանկության դեպքում, աղոթել միասին: Առանձնազրույցի ընթացքում առաջացած այն խնդիրները, որոնք առնչվում են ընտանիքի մյուս անդամներին, կարող են քննարկվել ընտանեկան առաջիկա երեկոյի ժամանակ:

Ընտանեկան միջոցառումներ

Ծնողները պետք է հաճախակի ժամանակ գտնեն և ծրագրավորեն այնպիսի ընտանեկան համատեղ միջոցառումներ, ինչպիսիք են՝ միասին զբոսնելը, քաղաքից դուրս գալը, լողավազաններ, կինոթատրոններ, համերգներ, ներկայացումներ ու թանգարաններ հաճախելը, բնակարանի և բակի վերանորոգման աշխատանքների համատեղ կազմակերպումը և նման այլ հավաքույթներ. սրանք դեռևս մի քանիսն են այն բազմաթիվ միջոցառումներից, որոնց շնորհիվ ընտանիքները կարող են միասին զվարճանալ:

Ընտանիքը, որը միասին է անցկացնում միջոցառումները, ավելի շատ է զգում սեր ու ներդաշնակություն: Երեխաներն ավելի են մտերմանում և բարյացակամ դառնում՝ լսելու իրենց ծնողներին և հետևելու նրանց խորհուրդներին, երբ ավելի շատ են լինում միասին և ծնողները ի վիճակի են լինում ավելի արդյունավետ ուսուցանել ավետարանը:

Ընտանեկան պարտականությունների կատարում

Տիրոջ Եկեղեցու առաքելությունն է օգնել մարդկանց գալ դեպի Քրիստոսը: Ընտանիքները կարող են կատարել այս առաքելությունը, եթե նրանք.

1. Հոգում են իրենց անձնական հոգևոր ու կենսական կարիքները և պատրաստակամ են օգնելու մերձավորներին:
2. Կիսվում են ավետարանով ուրիշների հետ:
3. Հետևում են, որ ընտանիքի անդամները ստանան տաճարային օժտումներ և օգնեն ստանալ նույն օրհնությունները իրենց մահացած նախնիների համար:

Հոգևոր ու կենսական կարիքներ

Հոգևոր կարիքներ

Այս ուղեցույցի նախորդ «Ավետարանի ուսուցանումը տանը» գլուխը պարունակում է տեղեկատվություն այն մասին, թե ինչպես կարող են ընտանիքները հոգալ իրենց հոգևոր կարիքները:

Կենսական կարիքներ

Ընտանիքները պետք է ձգտեն դառնալ ինքնակենսունակ՝ հոգալու համար իրենց կենսական կարիքները և օգնեն մերձավորներին: Ինքնակենսունակ լինելու համար ընտանիքի անդամները պետք է աշխատելու ցանկություն ունենան: Աշխատանքը պահանջում է ֆիզիկական, մտավոր և հոգևոր ջանքեր: Այն աղբյուրն է կատարելության,երջանկության, ինքնակայացման և բարեկեցության: Ծնողները պետք է միշտ ձգտեն իրենց ուժերի վրա վստահ լինել և նույն կերպով էլ սովորեցնեն իրենց երեխաներին: Լինելով ինքնակենսունակ, նրանք հնարավորություն կունենան օգնելու կարիքավորներին:

Հայրերը պետք է ապահովեն իրենց ընտանիքներին կյանքի համար անհրաժեշտ պայ-

մաններով և պաշտպանեն իրենց ընտանիքները: Մայրերը հիմնականում պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակության համար: Ծնողները պետք է հետևեն, որ ընտանիքն ունենա հարմարավետ ու մաքուր բնակարան, առողջարար սնունդ, հագուստ, առողջության խնամքի և ուսման հնարավորություն, կատարեն ֆինանսական կարողությունների ճիշտ բաշխում և, եթե կա հնարավորություն, աճեցնեն սեփական մթերքները: Ծնողները պետք է սովորեցնեն իրենց երեխաներին, թե ինչպես պատրաստեն իրենց կերակուրը և ինչպես այն պահեն հետագա օգտագործման համար:

Ծնողները պետք է ինքնակամ տքնաջան աշխատեն, որպեսզի կարողանան հոգալ այդ կենսական կարիքները: «Եվ դուք չեք հանդուրժի, որ ձեր երեխաները ման գան քաղցած կամ մերկ» (Մոսիա 4.14): Ծնողները պետք է լավ պլանավորեն և պատրաստ լինեն ապահովելու իրենց ընտանիքների կարիքները հիվանդության, դժբախտության, գործազրկության և այլ փորձությունների ժամանակ: Եթե հայրը դժվարանում է ապահովել իր ընտանիքի ֆիզիկական կարիքները և, եթե ընտանիքի մյուս անդամները ի վիճակի չեն օգնել, նա կարող է աջակցություն փնտրել քահանայության ղեկավարների մոտ:

Երեխաները կարող են աջակցել իրենց ընտանիքների ֆիզիկական կարիքների խնդրում՝ օգնելով իրենց ընտանիքներին իրենց աշխատանքով, դպրոցում լավ սովորելով, հոգ տանելով իրենց հագուստների և իրերի համար, պահելով իրենց և իրենց տունը մաքուր և կոկիկ և կոփելով իրենց առողջությունը:

Ընտանիքի անդամները պետք է կատարելագործեն իրենց ընդունակությունները կարդալու, գրելու և մաթեմատիկայի հիմունքները սովորելու մեջ, պետք է օգտագործեն ցանկացած հնարավորություն ձեռք բերելու գիտելիքներ և ավելի հմտանան: Նրանք պետք է հնազանդվեն Իմաստության Խոսքին և ընդունեն միայն առողջարար սնունդ: Հնարավոր բոլոր տեղերում ընտանիքները պետք է պահեստավորեն տարեկան պաշար, կամ այնքան, որքան հնարավոր է կյանքի հիմնական կարիքները հոգալու համար: Ընտանիքի անդամները պետք է խուսափեն ոչ անհրաժեշտ պարտքերից, տնտեսեն որոշ գումար ապագայի համար, կատարեն իրենց բոլոր պարտավորությունները և օգտագործեն իրենց միջոցները խելամտորեն՝ խուսափելով դրանց անտեղի վատնումից:

Ծնողները պետք է սովորեցնեն իրենց երեխաներին կիսվել ունեցածով մերձավորների հետ: Գրեթե բոլորն էլ կարող են ինչ-որ բան տալ, որքան էլ քիչ լինի այն: Կարիքի մեջ գտնվողներին օգնելու եղանակներից մեկն ամեն ամիս ծոմ պահելն է և ծոմապահության հանգանակության նվիրաբերումը, որը օգտագործվում է քաղցածին՝ սնունդ, անօթևանին՝ ապաստան, մերկին՝ հագուստ տրամադրելու, ինչպես նաև՝ վշտահարին սփոփելու համար: Մենք ցույց ենք տալիս մեր սերը Տիրոջ նկատմամբ, երբ օգնում ենք մերձավորին: Նա ասել է. «Ճշմարիտ ասում եմ ձեզ, որովհետև այս իմ փոքր եղբայրներից մեկին արիք, ինձ արիք» (Մատթեոս ԻԵ.40):

Կիսվել ավետարանով

Տերը Վերջին Օրերի Իր մարգարեների միջոցով սովորեցրել է, որ Եկեղեցու յուրաքանչյուր անդամ կրում է պատասխանատվություն կիսվելու ավետարանով ուրիշների հետ: «Ամեն մարդ, ով զգուշացվել է, պետք է զգուշացնի իր մերձավորին» (տես ՎԼՈ 88.81): Մորմոնի Գրքում մարգարե Ալման բացատրել է, որ երբ մկրտվում ենք, մենք պետք է պատրաստ լինենք «կանգնելու որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում» (Մոսիա 18.9):

Ընտանիքի անդամները պետք է անեն ամեն ինչ օգնելու համար իրենց ազգականներին, ընկերներին և հարևաններին սովորելու Հիսուս Քրիստոսի ավետարանը, քանի որ այն կարող է օրհնություններ բերել նրանց կյանք: Ավետարանով միմյանց հետ կիսվելիս ծնողները և երեխաները կարող են զորացնել իրենց անձնական վկայությունները և ավետարանի օրհնությունները բերել մյուսներին: Ընտանիքները կարող են՝

- Լինել լավ օրինակ՝ հնազանդվելով բոլոր պատվիրաններին (տե՛ս Մատթեոս Ե.16):
- Երախտապարտ լինել Եկեղեցում իրենց անդամակցության համար (տե՛ս Հռովմայեցիս Ա.16), և ուրիշներին ասեն, որ իրենք անդամ են:
- Հարցնել ծանոթներին, թե արդյո՞ք նրանք ցանկանում են ավելի շատ իմանալ Եկեղեցու մասին:
- Խնդրել Տիրոջը օգնել իրենց ընտրել այն ընտանիքը կամ այն անձնավորությանը, ով պատրաստ է լսել ավետարանի մասին:
- Որևէ առիթով Եկեղեցին ներկայացնել որևէ ընտանիքին կամ անհատին, օրինակ կարելի է նրանց հրավիրել ընտանեկան երեկոյին, կամ Եկեղեցու հավաքին, կամ միջոցառմանը, հանձնել նրանց Եկեղեցու գրքեր կամ գրքույկներ, կամ խոսել նրանց հետ ավետարանի օրհնությունների մասին:
- Հրավիրել ընտանիքին կամ անհատին իրենց տուն, որպեսզի միսիոներները կարողանան ուսուցանել նրանց:

Ծնողները պատասխանատվություն են կրում պատրաստվելու և պատրաստելու իրենց երեխաներին լիաժամկետ միսիա ծառայելուն: Պատրաստելով երեխաներին, հատկապես՝ որդիներին, ծնողները պետք է ուսուցանեն ավետարանը տանը, կատարելով անհատական և ընտանեկան սուրբ գրքերի ուսումնասիրություն և աղոթքներ, և հաճախ խոսեն ավետարանով կիսվելու պատասխանատվությունների և օրհնությունների մասին: Նրանք կարող են սովորեցնել իրենց երեխաներին խնայել միջոցներ իրենց միսիայի համար, տքնաջան աշխատել, վստահել իրենց ուժերին և ծառայել ուրիշ մարդկանց:

Տաճարային արարողություններ ապրողների և մահացածների համար

Տաճարներում, Եկեղեցու արժանի անդամները ստանում են սուրբ արարողություններ և մտնում են ուխտի մեջ Աստծո հետ: Նրանք նաև մասնակցում են իրենց մահացած նախնիների համար կատարվող արարողությունների աշխատանքին: Հնարավոր ցանկացած վայրում նորադարձ հայրը և մայրը պետք է ստանան տաճարի երաշխավորագիր իրենց քահանայության ղեկավարներից և գնան տաճար՝ ստանալու իրենց անձնական տաճարային արարողությունները: Եթե նրանք դեռևս ի վիճակի չեն գնալու տաճար, միևնույն է, պետք է շարունակեն ապրել տաճարի երաշխավորագրին արժանի կյանքով:

Ընտանիքները ունեն սրբազան պատասխանատվություն հավաստիանալու, որ տաճա-

րային արարողություններ կատարվեն իրենց նախնիների համար ևս, որոնք մահացել են առանց այն ստանալու: Եկեղեցու անդամները, որոնք արդեն ստացել են իրենց անձնական տաճարային արարողությունները, պետք է հաճախակի այցելեն տաճար. այնքան հաճախ, որքան ժամանակը, միջոցները և տաճարի հասանելիությունը թույլ են տալիս նրանց կատարելու արարողություններ իրենց նախնիների համար:

Հայրերը և մայրերը պետք է հավաքեն գրավոր արձանագրություններ իրենց կյանքի և իրենց երեխաների կյանքի կարևոր իրադարձությունների մասին, ներառյալ՝ օրհնելու, մկրտության, ձեռնադրման, ամուսնության և մահվան մասին վկայականներ, կարևոր նամակներ, նկարներ, հրապարակումներից քաղվածքներ և նմանատիպ այլ նյութեր: Նրանք պետք է հավաքեն իրենց անձնական պատմությունները և պետք է խրախուսեն ընտանիքի յուրաքանչյուր անդամին պահել անձնական պատմության օրագիր: Նրանք

պետք է օգնեն երեխաներին, որ նրանք սկսեն լրացնել իրենց անձնական օրագրերը:

Ընտանիքները պետք է հավաքեն տեղեկություններ իրենց նախնիների մասին և զետեղեն այն ընտանեկան պատմության մեջ: Նրանք պետք է սկսեն տեղեկություններ հավաքել իրենց նախնիների վերջին չորս սերունդների մասին:

Ղեկավարության ուսուցանում

Ցցի, միսիայի կամ շրջանի ղեկավարների կառավարման ներքո, քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները պետք է ուսուցանեն ծնողներին՝ հասկանալ և կատարել ընտանիքի երեք հիմնական պարտականությունները (տե՛ս 12–15 էջերը): Ղեկավարները պետք է ուսուցանեն հայրերին և մայրերին, ինչպես ղեկավարել իրենց ընտանիքները: Եթե ընտանիքը ապրում է մեկուսացած տարածքում, ցցի, միսիայի կամ շրջանի ղեկավարները պետք է հետևեն, որ ծնողները սովորեն և կատարեն իրենց պարտավորությունները:

Տանը երկրպագության ծառայություններ անցկացնելը
(մեկուսացած տարածքներում ապրող ընտանիքների համար)

Որոշ ընտանիքներ ապրում են մեկուսացած տարածքներում և չեն կարողանում կանոնավոր ձևով հաճախել ծխի կամ ճյուղի ժողովներին: *Ցցի, միսիայի կամ շրջանի նախագահի լիազորությամբ* այդպիսի ընտանիքները պետք է Կիրակնօրյա երկրպագության ծառայություններ անցկացնեն իրենց տանը: Ընտանիքները, որոնք ապրում են այնպիսի տարածքներում, որտեղ հաստատված Եկեղեցու միավոր չկա, Տարածքային Նախագահի լիազորության կարիքն ունեն:

Հայրը կամ մեկ ուրիշ քահանայություն կրող կարող է պատրաստել և օրհնել հաղորդությունը, եթե նա արժանի է, քահանա է Ահարոնյան Քահանայության կամ կրում է Մելքիսեդեկյան Քահանայություն և *ունի իր քահանայության ղեկավարների թույլտվությունը*: Քահանայություն կրող յուրաքանչյուր անդամ կարող է բաժանել հաղորդությունը: Հաղորդության անցկացման հրահանգը տրված է այս ուղեցույցի էջ 21–23-ում:

Կիրակնօրյա երկրպագության ծառայությունը պետք է լինի պարզ, կատարվի ակնածանքով և մեծարանքով: Այն կարող է բաղկացած լինել հետևյալ մասերից.

1. Բացող օրհներգ
2. Բացող աղոթք
3. Հաղորդության օրհնում և բաժանում
4. Հետևյալ մեկ կամ երկու կետերից՝
   - Մեկ կամ երկու կարճ ելույթներ կամ վկայություններ
   - Ընտանիքով սուրբ գրության ընթերցում և քննարկում
   - Ընտանիքի մի անդամի կողմից պատրաստված դաս
5. Փակող օրհներգ
6. Փակող աղոթք

Կիրակնօրյա երկրպագության ծառայությունը ծրագրելիս ծնողները պետք է փնտրեն և ուղղորդվեն Տիրոջ Հոգով: Մորմոնի Գրքում մարդիկ իրենց օրինակով ցույց են տալիս նմանատիպ ծառայության օրինակ. «Եվ նրանց ժողովները ղեկավարվում էին Եկեղեցու կողմից . . . համաձայն Հոգու ներգործումների ձևին, և Սուրբ Հոգու զորությամբ. քանզի, ինչպես որ Սուրբ Հոգու զորությունն առաջնորդում էր նրանց՝ լիներ դա քարոզելը, թե՛ հորդորելը կամ աղոթելը, թե՛ աղերսելը կամ երգելը, ճիշտ այդպես էլ արվում էր» (Մորոնի 6.9):

Ընտանիքը պետք է օգտագործի սուրբ գրությունները որպես իրենց հիմնական ուղեցույց: Ինչպես նաև նրանք կարող են օգտագործել գերագույն համաժողովի ելույթները, *Ավետարանի Հիմունքները, Ավետարանի Սկզբուն, Հավատքին Հավատարիմ, Երիզորացնելու տասարդներին համար,* միսիոներական գրքույկները, Եկեղեցու ամսագրերը և Եկեղեցու այլ հրատարակություններ ու տեսաերիզներ:

Եթե ընտանիքում որևէ մեկը չի կրում համապատասխան քահանայություն, հայրը կամ մայրը կարող են հավաքել ընտանիքի անդամներին՝ միասին երգելու օրհներգեր, ուսումնասիրելու սուրբ գրություններ, աղոթելու, այդպիսով ավելի մոտենալու միմյանց և Երկնային Հորը: Ընտանիքի նշանակված քահանայության ղեկավարը պետք է այնպես կազմակերպի, որպեսզի ընտանիքը պարբերաբար ստանա հաղորդությունը:

Ծնողները պետք է կազմակերպեն շաբաթական միջոցառումներ, ինչպիսիք են՝ էքսկուրսիաները, զբոսախնջույքները, օգտակար ֆիլմերի դիտումը, ազգականներին այցելելը, սպորտը, երաժշտական ծրագրերը և լողը:

Ընտանիքը պետք է վճարի տասանորդ, ծոմի և այլ նվիրատվություններ ընտանիքին նշանակված քահանայության ղեկավարին:

Ընտանիքը չպետք է ներկայացնի գրավոր հաշվետվություններ Եկեղեցուն, բայց իրենց կցված քահանայության ղեկավարի հետ անցկացվող հարցազրույցի ժամանակ հորը մշտապես առաջարկվում է զեկուցել ընտանիքի մասին: Անհրաժեշտության դեպքում, ղեկավարները կարող են հեռախոսով անցկացնել նման հարցազրույցներ:

Քահանայության արարողություններ և օրհնություններ

Քահանայության արարողությունները Տիրոջ կողմից տրված սրբազան գործողություններ են և կատարվում են քահանայության իշխանության կողմից: Քահանայության օրհնությունները տրվում են քահանայության իշխանության կողմից բուժելու, մխիթարելու և խրախուսելու համար: Եղբայրները, որոնք կատարում են արարողությունները և օրհնում են, պետք է պատրաստեն իրենք իրենց՝ ապրելով ավետարանի սկզբունքներին համապատասխան և ջանալով ուղղորդվել Սուրբ Հոգով: Նրանք պետք է մեծարանքով կատարեն յուրաքանչյուր արարողություն և օրհնում, և ենթարկվեն հետևյալ պահանջներին: Արարողությունը պետք է՝

1. Կատարվի Հիսուս Քրիստոսի անունով:
2. Կատարվի քահանայության իշխանությամբ:
3. Կատարվի այնպիսի անհրաժեշտ ընթացակարգով, ինչպիսին է՝ հատուկ բառերի կամ սրբագործված յուղի օգտագործումը:
4. Լիազորված լինի նշանակված քահանայության ղեկավարի կողմից, որը կրում է հատուկ բանալիները, եթե անհրաժեշտ է:

Սրանք են այն արարողությունները, որոնք պահանջում են քահանայության ղեկավարության լիազորություն, երեխաների անվանակոչումն ու օրհնումը, մկրտությունը և ձեռնադրումը, քահանայության շնորհումը և քահանայության պաշտոնի կարգումը, օրհնումն ու հարդարության բաժանումը և գերեզմանների օծումը:

Երբ մի քանի եղբայրներ են մասնակցում օրհնության արարողությանը, յուրաքանչյուրը իր ձախ ձեռքը թեթևակի դնում է իր ձախ կողմում կանգնած եղբոր ուսին: Այս դեպքում չի քաջալերվում օրհնության ժամանակ մեծ թվով քահանայություն կրողների հրավիրել:

Արարողությունները և օրհնությունները, որոնք բացատրվում են այս հատվածում, կօգնեն հայրերին ծառայել որպես հայրապետ իրենց ընտանիքներում:

Երեխաների օրհնումն ու անվանակոչումը

«Քրիստոսի եկեղեցու ամեն մի անդամ՝ ունենալով երեխաներ, պետք է բերի նրանց երեցների մոտ, եկեղեցու առաջ, որոնք պետք է իրենց ձեռքերը դնեն նրանց վրա՝ Հիսուս Քրիստոսի անունով, և օրհնեն նրանց՝ նրա անունով» (տես ՎԱՌ 20.70): Ըստ այս հայտնության, միայն Մելքիսեդեկյան Քահանայություն կրող արժանի մարդիկ կարող են մասնակցել երեխաների օրհնությանն ու անվանակոչմանը: *Երեխաներին անվանակոչելու և օրհնելու արարողությունը պահանջում է քահանայության իշխանության լիազորություն:*

Նորածնին օրհնելու ժամանակ տղամարդիկ, ովքեր Մելքիսեդեկյան Քահանայություն են կրում, կազմում են շրջան, նրանք բոլորը նորածնին վերցնում են իրենց ափերի վրա: Եթե օրհնում են մեծ երեխայի, եղբայրները իրենց ձեռքերը թեթևակի դնում են երեխայի գլխին: Այն անձը, որը տալիս է օրհնությունը.

1. Դիմում է Երկնային Հորը:
2. Հավաստում է, որ օրհնումը կատարվում է Մելքիսեդեկյան Քահանայության իշխանությամբ:
3. Տալիս է երեխային անուն:
4. Տալիս է քահանայական օրհնություն Սուրբ Հոգու թելադրանքով:
5. Ավարտում է Հիսուս Քրիստոսի անունով:

Մկրտություն

Նախագահող իշխանության ղեկավարությամբ, արժանի քահանան կամ Մելքիսեդեկյան Քահանայություն կրող տղամարդը կարող է մկրտել անձնավորությանը: Այդ անելու համար, նա.

1. Կանգնում է ջրի մեջ այն անձնավորության հետ, ում պետք է մկրտի:
2. Ապահովության և հարմարավետության համար բռնում է անձնավորության աջ դաստակը իր ձախ ձեռքով, մկրտվող անձը բռնում է մկրտողի ձախ դաստակը իր ձախ ձեռքով:
3. Բարձրացնում է աջ ձեռքն արմունկին ուղղահայաց:
4. Արտասանում է մկրտվողի լրիվ անունն ու ազգանունը և ասում. «Լիազորված լինելով

Հիսուս Քրիստոսի կողմից, ես մկրտում եմ քեզ՝ անունով Հոր, և Որդու, և Սուրբ Հոգու: Ամեն:» (տես ՎԱՈՒ 20.73):

5. Մկրտվողը ապահով զգալու համար սուզվելու պահին փակում է քիթը աջ ձեռքով, մկրտողը իջեցնում է աջ ձեռքը և դնում մկրտվողի մեջքին և ամբողջովին հագուստով սուզում է ջրի մեջ:

6. Օգնում է անձնավորությանը ջրից արագ դուրս գալ:

Մելքիսեդեկյան քահանայություն կրող երկու մարդիկ ամեն մկրտության ժամանակ հրավիրվում են որպես վկաներ, համոզվելու համար, որ մկրտությունը կատարվել է պատշաճ կերպով: Մկրտությունը պետք է կրկնել, եթե ասված բառերը ճիշտ նույնը չեն, ինչ որ գրված է ՎԱՈՒ 20.73-ում, կամ, եթե մկրտվողը ողջ մարմնով և հագուստով ամբողջովին չի ընկղմվել ջրի մեջ: Մկրտվող անձնավորությունը և մկրտողը պետք է հագնեն սպիտակ հագուստ, որը թրջվելիս չի թափանցում:

Հաստատում

Նորադարձները, ովքեր ինը տարեկան են կամ բարձր, և նրանք, ովքեր ութ տարեկան են, և նրանց ծնողները անդամներ չեն, հաստատվում են հաղորդության ժողովի ժամանակ (տես ՎԱՈՒ 20.41): Ութ տարեկան երեխաները մկրտվելուց անմիջապես հետո կարող են հաստատվել մկրտության վայրում, եթե ծնողներից մեկը Եկեղեցու անդամ է և երկու ծնողները տալիս են իրենց համաձայնությունը մկրտության և հաստատման համար: *Եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի ղեկավարությամբ,* Մելքիսեդեկյան Քահանայություն կրող մեկ կամ ավելի տղամարդիկ կարող են կատարել այս արարողությունը: Նրանք իրենց ձեռքերը թեթևակի դնում են տվյալ անձնավորության գլխին: Արարողությունը կատարողը.

1. Արտասանում է տվյալ անձնավորության ազգանունն ու անունը ամբողջությամբ:

2. Հավաստում է, որ արարողությունը կատարվում է Մելքիսեդեկյան Քահանայության իշխանությամբ:

3. Հաստատում է անձնավորությանը որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ:

4. Պարգևում է Սուրբ Հոգու ընծան ասելով. «Ստացի՛ր Սուրբ Հոգին»:

5. Տալիս է քահանայության օրհնություններ, ինչպես Հոգին է թելադրում:

6. Ավարտում է Հիսուս Քրիստոսի անունով:

Քահանայության շնորհում և Քահանայության պաշտոնների կարգում

Եպիսկոպոսը կամ ճյուղի նախագահը վերահսկում է Ահարոնյան Քահանայության շնորհումը և սարկավագի, ուսուցչի և քահանայի պաշտոններում կարգելը: Նախքան տվյալ անձի կարգվելը

Ահարոնյան Քահանայության պաշտոնին, նրա հետ պետք է եպիսկոպոսը կամ ճյուղի նախագահը առանձնազրույց անցկացնի և գտնի, որ վերջինս արժանի է: Նաև, նա պետք է հաստատվի ճյուղի հաղորդության ժողովի ժամանակ: Եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի լիազորությամբ քահանան կարող է Ահարոնյան Քահանայություն շնորհել մեկ այլ անձնավորության և կարգել նրան Ահարոնյան Քահանայության պաշտոնին:

Ցցի կամ միսիայի նախագահը վերահսկում է Մելքիսեդեկյան Քահանայության շնորհումը և կարգումը երեցի կամ քահանայապետի պաշտոններում:

Քահանայություն շնորհելու կամ անձնավորությանը քահանայության պաշտոնում կարգելու համար մեկ կամ մեկից ավելի տղամարդիկ, որոնք կրում են պահանջվող քահանայությունը և, որոնք լիազորված են նախագահող իշխանության կողմից, իրենց ձեռքերը թեթևակի դնում են տվյալ անձնավորության գլխին: Արարողությունը կատարողը.

1. Արտասանում է անձնավորության ազգանունն ու անունը ամբողջությամբ:
2. Հավաստում է իշխանությունը (Ահարոնյան կամ Մելքիսեդեկյան քահանայության), որով կատարվում է արարողությունը:
3. Շնորհում է Ահարոնյան կամ Մելքիսեդեկյան Քահանայություն, եթե այն չի շնորհվել ավելի շուտ:
4. Կարգում է անձնավորությանը Ահարոնյան կամ Մելքիսեդեկյան քահանայության պաշտոնում և պարգևում է այդ պաշտոնի իրավունքները, ուժն ու լիազորությունը:
5. Տալիս է քահանայության օրհնություն, ինչպես Հոգին է թելադրում:
6. Ավարտում է Հիսուս Քրիստոսի անունով:

Հաղորդություն

Հաղորդությունը շատ սրբազան արարողություն է: Հաղորդությունը ընդունելը մարդուն հնարավորություն է տալիս հիշել Հիսուս Քրիստոսի կյանքի, ուսմունքի և Քավության մասին: Դա այն ժամանակն է , երբ յուրաքանչյուր ոք վերահաստատում է ուխտը, որն ինքը կապել է Տիրոջ հետ մկրտվելու ժամանակ (տես Մոսիա 18.8–10):

Ուսուցիչները կամ քահանաները կարող են պատրաստել հաղորդությունը. քահանաները կարող են օրհնել այն, իսկ սարկավագները, ուսուցիչները և քահանաները կարող են բաժանել այն: Եղբայրները, ովքեր կրում են Մելքիսեդեկյան Քահանայություն, կարող են պատրաստել, օրհնել և բաժանել հաղորդությունը: Սակայն, սովորաբար, կատարում են այդ ամենը, երբ քիչ են Ահարոնյան

Քահանայություն կրող եղբայրները: Եթե անձը կատարել է լուրջ օրինազանցություն, նա չպետք է պատրաստի, օրհնի կամ բաժանի հաղորդությունը, մինչև որ չապաշխարի կամ չլուծի այդ հարցը եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ:

Նրանք, ովքեր պատրաստում, օրհնում, կամ բաժանում են հաղորդությունը, սպասավորում են այդ արարողությունը ուրիշներին Տիրոջ կողմից: Ամեն ոք, ով կրում է քահանայություն, պետք է այդ հանձնարարությանը լուրջ և ակնածալից վերաբերվի: Նա պետք է լինի մաքուր, կոկիկ և համեստ հագնված, հոգեպես պատրաստ: Արտաքին տեսքը պետք է արտացոլի այդ արարողության սրբազան լինելը:

Եղբայրները, ովքեր պատրաստում են հաղորդությունը, պետք է կատարեն դա նախքան ժողովի սկսվելը: Նրանք պետք է չկտրատված հացը դնեն հացի մաքուր ապսեներում և մաքուր ջրով լի հաղորդության բաժակներով մատուցարանները դնեն հաղորդության սեղանին: Նրանք պետք է ծածկեն հացը և ջուրը մաքուր, սպիտակ ծածկոցով:

Հաղորդության օրհներգի ժամանակ նրանք, ովքեր հաղորդության սեղանի մոտ են, պետք է բացեն ծածկոցը և մանր կտորների բաժանեն հացը: Օրհներգից հետո, անձնավորությունը, որն օրհնում է հացը, պետք է ծնկի գա և ասի հացի համար տրված հաղորդության աղոթքը: Այնուհետև, եղբայրները բաժանում են հացը ակնածալից և կարգով: Նախ, ժողովի նախագահող ղեկավարներն են ստանում հաղորդությունը: Ապա, ներկաներն են հնարավորություն ստանում ճաշակելու հացից: Նրանք, ովքեր բաժանում են այն, վերադարձնում են մատուցարանները հաղորդության սեղանի մոտ: Նրանք, ովքեր օրհնում են հաղորդությունը, կրկին ծածկում են մատուցարանները հացը բաժանելուց անմիջապես հետո:

Հաղորդության սեղանի մոտ գտնվողները բացում են ջրի մատուցարանների վրա գտնվող ծածկոցը: Անձնավորությունը, որն օրհնում է ջուրը, ծնկի է գալիս և ասում ջրի համար հաղորդության աղոթքը: Հետո եղբայրները ջուրը բաժանում են ներկաներին: Մատուցարանները հետ են բերվում հաղորդության սեղանի մոտ և կրկին ծածկվում: Այնուհետև, եղբայրները, որոնք օրհնում և բաժանում են հաղորդությունը, գրավում են իրենց տեղերը:

Հաղորդությունը Եկեղեցու անդամների համար է, ներառյալ՝ երեխաները: Ժողովը վարողը չպետք է հայտարարի, որ հաղորդությունը կբաժանվի միայն անդամներին, ոչ մի դեպքում չպետք է զրկել ոչ անդամներին այն ճաշակելուց:

Հաղորդության աղոթքները պիտի ասվեն պարզ, ճշգրիտ և հարգանքով: Եթե հաղորդությունը օրհնող անձնավորությունը սխալ է կատարում բառերի մեջ և չի ուղղում սխալը, ապա եպիսկոպոսը կամ ճյուղի նախագահը խնդրում է կրկնել աղոթքը և ճիշտ ձևով ասել այն:

Հացի օրհնությունը հետևյալն է.

«Ո՜վ, Աստված, Հա՛յր Հավերժական: Քո Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով խնդրում ենք՝ օրհնիր ու սրբացրու այս հացը բոլոր նրանց հոգիների համար, ովքեր ճաշակում են այն, որպեսզի նրանք կարողանան ուտել այն՝ ի հիշատակ Որդուդ մարմնի և վկայեն Քեզ, Ո՜վ Աստված, Հա՛յր Հավերժական, որ նրանք հոժար են իրենց վրա վերցնել անունը Քո Որդու և միշտ հիշել Նրան և պահեն Նրա պատվիրանները, որ Նա տվել է իրենց, որպեսզի նրանք Նրա Հոգին միշտ իրենց հետ ունենան: Ամեն» (տես ՎԵՈՒ 20.77 և Մորոնի 4):

Ջրի օրհնությունը հետևյալն է.

«Ո՜վ, Աստված, Հա՛յր Հավերժական: Քո Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով խնդրում ենք՝ օրհնիր ու սրբացրու այս ջուրը, բոլոր նրանց հոգիների համար, ովքեր ըմպում են այն, որպեսզի նրանք կարողանան անել այդ ի հիշատակ Որդուդ արյան,որ հեղվել է իրենց համար, որ նրանք կարողանան վկայել Քեզ, Ո՜վ Աստված, Հա՛յր Հավերժական, որ նրանք միշտ հիշում են Նրան, որ նրանք Նրա Հոգին միշտ իրենց հետ ունենան: Ամեն» (տես ՎԱՈ 20.79 և Մորոնի 5):

Հաղորդությունը պետք է վերցվի սեղանի վրայից անմիջապես հավաքից հետո: Մնացած հացը կարող է օգտագործվել որպես սնունդ:

Հաղորդության օրհնումը և բաժանումը պահանջում է նախագահող իշխանությունից լիազորություն:

Յուղի սրբագործումը

Մի մարդ (կամ մեկից ավել), որը կրում է Մելքիսեդեկյան Քահանայություն, սրբագործում է ձիթապտղի յուղը հիվանդներին և վշտյալներին օծելու համար: Յուղի սրբագործումը կատարողը.

1. Ձեռքի վրա է վերցնում ձիթապտղի յուղի բաց սրվակը:
2. Դիմում է մեր Երկնային Հորը:
3. Հավաստում է, որ ինքը գործում է Մելքիսեդեկյան Քահանայության իշխանությամբ:
4. Սրբագործում է յուղը (ոչ թե սրվակը) և ձեռնադրելով օծում է հիվանդներին և վշտյալներին:
5. Ավարտում է Հիսուս Քրիստոսի անունով:

Հիվանդներին ծառայելը

Միայն այն տղամարդիկ, որոնք կրում են Մելքիսեդեկյան Քահանայություն, կարող են ծառայել հիվանդներին կամ վշտյալներին: Սովորաբար, երկու և երկուսից ավելի հոգի են մասնակցում ծառայությանը, բայց մի հոգին էլ կարող է միայնակ այն անել: Եթե սրբագործված յուղը առկա չէ, տղամարդը, որը կրում է Մելքիսեդեկյան Քահանայություն, կարող է քահանայության իշխանությամբ օրհնություն տալ:

Հայրը, որը կրում է Մելքիսեդեկյան Քահանայություն, պետք է ծառայի իր ընտանիքի հիվանդ անդամներին: Նա կարող է խնդրել Մելքիսեդեկյան Քահանայություն կրող մեկ ուրիշ տղամարդու օգնել իրեն:

Հիվանդներին ծառայելը ունի երկու մաս (1) յուղով օծումը և (2) օծման կնքումը:

Յուղով օծումը

Տղամարդը, որը կրում է Մելքիսեդեկյան Քահանայություն, օծում է հիվանդ անձնավորությանը: Դրա համար նա.

1. Կաթեցնում է մի երկու կաթիլ սրբագործված յուղ տվյալ անձնավորության գլխին:
2. Ձեռքերը զգուշությամբ դնում է անձնավորության գլխին և ասում նրա անունն ու ազգանունը ամբողջությամբ:

3. Հավաստում է, որ ինքն օծում է անձնավորությանը Մելքիսեդեկյան Քահանայություն իշխանությամբ:
4. Հավաստում է, որ ինքն օծում է յուղով, որը սրբագործվել է հիվանդներին և վշտյալներին օծելու և օրհնելու համար:
5. Ավարտում է Հիսուս Քրիստոսի անունով:

Օծման կնքումը

Սովորաբար, երկու կամ ավել տղամարդիկ, որոնք կրում են Մելքիսեդեկյան Քահանայություն, իրենց ձեռքերը զգուշորեն դնում են հիվանդ անձնավորության գլխին: Մարդկանցից մեկը կնքում է օծումը: Դա անելու համար, նա.

1. Արտասանում է տվյալ անձնավորության լրիվ ազգանունը և անունը:
2. Հավաստում է, որ նա կնքում է օծումը Մելքիսեդեկյան Քահանայության իշխանությամբ:
3. Տալիս է օրհնություն ըստ Հոգու թելադրանքի:
4. Ավարտում է Հիսուս Քրիստոսի անունով:

Հայրական օրհնություններ և մխիթարման ու խորհրդի նպատակով տրվող այլ օրհնություններ

Հայրական օրհնություններ և քահանայության այլ օրհնություններ տրվում են ապահովելու և մխիթարելու համար, ինչպես Հոգին է ուղեկցում:

Հայրը, որը կրում է Մելքիսեդեկյան Քահանայություն, կարող է տալ հայրական օրհնություն իր երեխաներին: Այդպիսի օրհնությունը կարող է հատկապես օգտակար լինել, երբ երեխաները գնում են տնից, դպրոց գնալու կամ միսիա գնալու նպատակով, կամ սկսում են աշխատանքային գործունեությունը, ամուսնանում են, մեկնում են զինվորական ծառայության, կամ հայտնվում են անձնական բարդ իրավիճակներում: Այդ օրհնությունները մեծ ուժ կարող են լինել ընտանիքի համար: Ընտանիքը կարող է արձանագրել հոր օրհնությունը ընտանեկան մատյանում, սակայն դրանք չեն պահպանվում Եկեղեցու գրառումներում: Ծնողները պետք է խրախուսեն երեխաներին ձգտել ստանալ հայրական օրհնություններ, երբ զգում են դրա կարիքը:

Արժանի ամուսինները, որոնք կրում են Մելքիսեդեկյան Քահանայություն, նաև կարող են տալ մխիթարության և խորհրդի օրհնություններ իրենց կանանց, ընտանիքի այլ անդամներին և ուրիշներին, ովքեր խնդրում են այն:

Հայրական օրհնություն կամ մխիթարության ու խորհրդի այլ օրհնություններ տալու համար Մելքիսեդեկյան Քահանայություն կրող արժանավոր տղամարդը մենակ կամ մեկ կամ մի քանի արժանի տղամարդկանց հետ, որոնք Մելքիսեդեկյան Քահանայություն են կրում, թեթևակի դնում են իրենց ձեռքերը

օրհնություն ստացող անձնավորության գլխին: Յուղը անհրաժեշտ չէ այդպիսի օրհնության համար: Օրհնություն տվողը.

1. Արտասանում է տվյալ անձի անունը և ազգանունը ամբողջությամբ:
2. Հավաստում է, որ նա տալիս է օրհնություն Մելքիսեդեկյան Քահանայության իշխանությամբ:
3. Տալիս է օրհնություն Հոգու թելադրանքով:
4. Ավարտում է Հիսուս Քրիստոսի անունով:

Գերեզմանների օծում

Այն անձնավորությունը, որը օծում է գերեզմանը, պետք է կրի Մելքիսեդեկյան Քահանայություն և *պետք է լիազորված լինի քահանայության պաշտոնյայի կողմից, որը վարում է արարողությունը:*

Գերեզմանն օծելու համար նա.

1. Դիմում է Երկնային Հորը:
2. Հավաստում է, որ նա օծում է գերեզմանը Մելքիսեդեկյան Քահանայության իշխանությամբ:
3. Օծում և սրբագործում է գերեզմանը, որպես մահացածի մարմնի հանգստության վայր:
4. Հարմար մի տեղ կանգնած աղոթում է, որ տեղը լինի նվիրագործված և պաշտպանված մինչև գալիք Հարությունը:
5. Խնդրում է Տիրոջը մխիթարել ընտանիքին և Հոգու թելադրանքով արտահայտում է հորդորող մտքեր:
6. Ավարտում է Հիսուս Քրիստոսի անունով:

Եթե ընտանիքը ցանկանում է, կարող է դիմել որևիցե մի անձնավորության (գերադասելի է Մելքիսեդեկյան Քահանայություն կրող), որպեսզի օծման աղոթքի փոխարեն, ասվի միայն աղոթք՝ գերեզմանի մոտ:

Եկեղեցու նյութեր ձեռք բերելը և Ընտանիքի Պատմության մեջ տեղեկություններ տեղադրելը

Տեղական ղեկավարները և մյուս անդամները կարող են ձեռք բերել Եկեղեցու նյութերը, ներառյալ՝ սուրբ գրությունները, ուսումնառական դասընթացները, Եկեղեցու ամսագրերը, տաճարային ներքնազգեստը, տաճարային հագուստը իրենց Եկեղեցու բաշխման կենտրոնից կամ ծառայության կենտրոնից, Սոլթ Լեյքի Բաշխման Կենտրոնից կամ Եկեղեցու պաշտոնական Ինտերնետային էջից, որի հասցեն է՝ www.lds.org:

Ընտանիքի պատմության համար տեղեկությունը մատչելի է Եկեղեցու Ընտանիքի պատմության ինտերնետային էջից, որի հասցեն է. www.familysearch.org:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02311 80201 2
31180 201